2/51041

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 01

2026 թվականի փետրվարի 27-ին «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» ԵԴ-3-2026 պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ք. Երևան «09» «03» 2026 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ կազմակերպություն), տնօրեն Վլադիմիր Գևորգյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով 2026 թվականի փետրվարի 27-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» ԵԴ-3-2026 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 9.3.-րդ կետը՝ Պայմանագրի Կողմերը համաձայնվեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1.1.1 Պայմանագրի 5.-րդ կետի 5.1.-ին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ. «Սույն պայմանագրի 1.-ին կետի 1.1.-ին ենթակետում սահմանված գումարից 7355.2 հազար դրամը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, 39996.8 հազար դրամը՝ երկրորդ եռամսյակում, իսկ 11838.0 հազար դրամը՝ սույն պայմանագրի 4.-րդ կետի 4.1.-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով»:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով երկու օրինակից, կնքված է, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2	ք. Ստեփանավան, Զարենցի 179-28
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011032704	Հ/հ 2472405100700007
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 06952546
Գլխավոր քարտուղար՝	gevorgianconcern@gmail.com
Հ. Հակոբյան	Տնօրեն՝
/ստորագրություն/	Վ. Գևորգյան
Կ.Տ.	/ստորագրություն/
	Կ.Տ.